Բ. Գլուխ

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ

ՓԻԼՈՆԻ ԿԵԱՆՔԸ

Ծագումով հրեայ **Փիլոն Ալեքսանդրացին** (յուն.՝ Phílôn, մօտ. 20 մ.թ.ա. – 50 թ.) եղած է Հելլենիստական շրջանի նշանաւոր փիլիսոփայ եւ Յուդայական կրօնի աստուածաբան: Ան փորձած է միջնորդը հանդիսանալ Յուդայականութեան եւ Հելլենիստականութեան, այլ խօսքով՝ փորձած է կրօնն ու փիլիսոփայութիւնը համադրել: Ան մեծ ազդեցութիւն ունեցած է նաեւ հետագայ Նոր-Պլատոնական փիլիսոփայական ուղղութեան եւ Քրիստոնէութեան վրայ:

Փիլոն Ալեքսանդրացիի կեանքն ու գործը, փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնը լաւապէս հասկնալու համար, հարկ է պատմական ակնարկ մը նետել նախափիլոնեան ժամանակաշրջանին վրայ, կիզակէտ ունենալով մանաւանդ եգիպտական Ալեքսանդրիա քաղաքը, իր նշանաւոր դպրոցով, որու գլխաւոր ներկայացուցիչներէն կը հանդիսանայ, նոյնինքն Փիլոնը:

Փիլոն Ալեքսանդրացի, ծանօթ նաեւ *Փիլոն Հրեայ* կամ *Փիլոն Եբրայեցի* անուններով, ծնած է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքին մէջ, որ այն ատեն հռոմէական գաւառ մը կը նկատուէր, մօտ 20 մ.թ.ա. հելլենական հրեայ հարուստ ու երեւելի ընտանիքի մը մէջ: Թէեւ ծնողներու անունները յայտնի չեն, սակայն կ՚ենթադրուի, որ Փիլոն սերած է հրեայ կրօնականներու ընտանիքէն, որ նաեւ կապ ունէր Պաղեստինի հրեաներուն ու Երուսաղէմի տաճարին հետ: Այս պատճառով ալ, Փիլոն, քանիցս այցելած է Երուսաղէմ եւ մասնակցած՝ տաճարի արարողութիւններուն:

Հետաքրքրական է հաստատել, որ նաեւ յայտնի պատմաբան Փիլոնէն մեզի հասած, իր իսկ պատմական գրութիւններուն մէջ, երբեք յիշատակութիւն չկայ՝ Յիսուս Նազովրեցիին ու 12 առաքեալներուն մասին, որոնց ժամանակակիցը եղած է:

Փիլոնի փոքր եղբայրը, *Տիբերիոս* (Tiberius Iulius Alexander) եղած է պետական պաշտօնեայ: Ան Ալեքսանդրիոյ նաւահանգիստի մաքսատան ղեկավարն էր եւ Ալեքսանդրիոյ հրէական քաղաքամասի տուրքերու գանձիչը: Ի պաշտօնէ, ան կոչուած է՝ Alabarch:

Փիլոնի կեանքի մասին այլ մանրամասնութիւններ մեզի չեն հասած: Իրականութիւն է սակայն, որ ան բարձր ու յարգալիր դիրքեր ունեցած է թէ՛ Ալեքսանդրիոյ նշանաւոր դպրոցին եւ թէ հրէական համայնքին մէջ եւ կոչուած էր Ալեքսանդրիոյ հրէական համայնքը ներկայացնել Հռոմի տխրահռչակ կայսեր առջեւ.- **Կալիգուլա** (Gaius Iulius Ceasar, 12 – 41 թ., միայն յետ մահու ծանօթ, որպէս Caligula):